ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/46728-2019

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (ԽՍ-275-10.09.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հոկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1481 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան
Հեռ. 010515686

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-ՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ-ԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-275-10.09.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆ-ՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է գործող օրենքի (այսուհետ՝ օրենք) 32-րդ հոդվածի 1-ին մասից հանել «15 000 և ավելի բնակչություն ունեցող» բառերը, ինչի արդյունքում, անկախ համայնքի բնակչության թվից, հայտարարագիր ներկայացնելու պարտականություն է առաջանում Հայաստանի Հանրապետության բոլոր համայնքների ղեկավարների համար: Միաժամանակ, նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարևորում է հանրային ծառայության մեջ գտնվող անձանց գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման ինստիտուտը՝ որպես կոռուպցիայի կանխարգելման արդյունավետ միջոց: Այն նախ և առաջ արտացոլված է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հավանությանն արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրում:

Հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի նիստում հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը, որում, մասնավորապես, սահմանվել է, որ մինչև 2021 թվականն ընդլայնվելու է հայտարարատուների շրջանակը՝ հայտարարատուների ցանկում, ի թիվս մի շարք այլ պաշտոնյաների, ներառելով նաև 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ավագանու անդամներին և աշխատակազմերի քարտուղարներին, հանրային նշանակության կազմակերպություններում վարչական պաշտոն զբաղեցնող անձանց: Հակակոռուպցիոն ռազմավարությամբ աստիճանաբար անցում է կատարվելու համընդհանուր հայտարարագրման ինստիտուտի ներդրմանը:

Բացի դրանից՝ նշված հանձնառությունն ամրագրվել է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիրը հաստատելու մասին» N 1307-Լ որոշմամբ՝ «Բարձ-

բաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրերի էլեկտրոնային համակարգի կատարելագործում» հանձնառության շրջանակում Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը պարտավորվել է մինչև 2020 թվականի նոյեմբերի 20-ը ընդլայնել հայտարարատու պաշտոնատար անձանց շրջանակը, ի դեմս «.....15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ավագանու անդամների և աշխատակազմերի քարտուղարների»:

Հարկ է նկատել, որ հայտարարատու անձ շրջանակի ընդլայնումն առաջացնում է լրացուցիչ հայտարարագրերի ընդունման ու վերլուծության ծանրաբեռնվածություն, որը պահանջում է աշխատակազմի լրացուցիչ ռեսուրսներ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը հայտարարագրման ինստիտուտի կատարելագործման և հայտարարատու անձանց շրջանակի ընդլայնման խնդիրների լուծումը կիրականացնի փուլ առ փուլ՝ ապահովելով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից իր լիազորությունների անխոչընդոտ իրականացումը:

Ելնելով շարադրվածից՝ առաջարկում ենք նախագծով քննարկվող գործող օրենքի հոդվածը ներկա փուլում թողնել անփոփոխ՝ մինչև «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ավելի համապարփակ փոփոխությունների կատարումը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ 2018 թվականի մարտի 23-ի «Հանրային ծառայության մասին» ՀՕ-206-Ն օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

1) «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասը գործում է մինչև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կազմավորումը.

2) ներկայացված նախագծով փոփոխության ենթարկվող 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթն ուժի մեջ են մտնում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կազմավորման պահից:

Ուստի, 2011 թվականի մայիսի 26-ի «Հանրային ծառայության մասին» ՀՕ-172-Ն օրենքում փոփոխություն նախատեսելու անհրաժեշտությունը բացակայում է:

Այդուհանդերձ, անհրաժեշտության դեպքում, փոփոխությունը պետք է նախատեսվեր 2018 թվականի մարտի 23-ի «Հանրային ծառայության մասին» ՀՕ-206-Ն օրենքի 34-րդ հոդվածում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հոկտեմբերի 2019 թվականի N 1481 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Ռաֆիկ Գրիգորյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Խ-275-10.09.2019-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 15

Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Խ-275-10.09.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասից հանել «15 000 եւ ավելի բնակչություն ունեցող» բառերը:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 01-ից:

2. Մինչեւ 15 000 բնակչություն ունեցող համայքի ղեկավարն առաջին անգամ հայտարարագիր է ներկայացնում 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ մինչեւ ոչ ուշ, քան 2020 թվականի մարտի 30-ը:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ում

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության գործող օրենքի (այսուհետ՝ «Օրենք») 32-րդ հոդվածի սահմանմամբ՝ հայտարարատու պաշտոնատար անձանց շարքում են համայնքների ղեկավարները: Սակայն այդ մասով առկա է սահմանափակում՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեն 15 000 եւ ավել բնակչություն ունեցող համայնքների ղեկավարները: Արդյունքում՝ 502 համայքների ղեկավարներից հայտարարագիր են ներկայացնում 19 համայնքի (այդ թվում՝ Երեւանի) ղեկավար, իսկ հայտարարագիր չներկայացվող համայքների ղեկավարների շարքում կան 30 քաղաքների ղեկավարներ:

Կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում բոլոր համայքների ղեկավարների կողմից հայտարարագրերի ներկայացումը համարում ենք պարտադիր, քանի որ հանդիսանալով տեղական ինքակառավարման մարմնի ղեկավար, համայքի ղեկավարն ունի որոշումներ կայացնելու ավելի մեծ լիազորություններ, այդ թվում՝ համայնքի բյուջեի մասով, քան հայտարարագիր ներկայացնող բազմաթիվ այլ պաշտոնյաններ, ինչը բնականաբար ավելի մեծ ռիսկեր է պարունակում:

Հայտարարագիր չներկայացնող համայնքների ղեկավարների կողմից ղեկավարվող համայքների թվում կան տարեկան մինչեւ 500 մլն հայկական դրամ բյուջե ունեցող համայքներ: Միեւնույն ժամանակ, առկա են բազմաթիվ հրապարակումներ համայքների ղեկավարների առանձնատների, մեքենաների մասին, ովքեր երկար տարիներ հանդիսանում են համայնքի ղեկավարներ:

Ներկայումս հայտարարագիր ներկայացնող պաշտոնատար անձանց քանակը մոտավորապես 3 200 է: Առաջարկվող փոփոխության արդյունքում՝ այն կավելանա մոտ 15%-ով, ինչը չի առաջացնի էական հավելյալ ծանրաբեռնվածություն եւ ծախսեր դրանք ուսումնասիրող մարմնի համար:

Ընդ որում, համայքների խոշորացման գործընթացի պարագայում համայքների թիվը էա-կա-նորեն կնվազի, ինչը նոր հայտարարագիր ներկայացնող անձանց քանակը նույնպես կկրճատի: Ամեն դեպքում, ակհայտ է, որ այս պահին նպատակահարմար է բացահայտել բոլոր համայքների ղեկավարների հնարավոր չարաշահումները, որոնք ուղիղ կապ չունեն համայքի բնակչության թվաքանակի հետ: